Օրհնեմք նաև զանգամս Ազգային Պատգամաւորութեան և զամենայն գործակիցս Ձեր, մաղթելով ի Տեառնէ պարգևել Ձեզ և համայն վաստակաւորաց՝ քաջառողջութիւն և կեանս երջանկաւէտս ընդ յամայր ամս։

Լիայոյս եմք, զի յետ այսորիկ ևս, ի դէպս անհրաժեշտութեան, Դուք՝ որպէս ներկայացուցիչ Մեր, զնոյն ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն ունիք շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարենորոգութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի, յանդգնութիւն և յերջանկութիւն բազմատանջ հոգևոր զաւակաց Մերոց։

Ողջ լերուք, պահպանեալ ի խնամս ս. Հոգւոյն, զօրացեալ ի Տէր և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 20 փետրուարի 1914 ամի
ըստ Տոմարիս ՌՃԿԳ
ի Հայրապետութեան մերում Գ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 258

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ

Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նահանգեալ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Տաճկաստանի, Տ. Զաւէն Արքեպիսկոպոսի Տէր Եղիայեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական։

Ընկալաք զգրութիւն Ամենապատուութեան Ձերոյ յ19 դեկտեմբերի անցելոյ 1913 ամի թ. 1043, ընդ նորոյ կանոնագրի Ս. Յակոբեանց Վանայ Հայոց Երուսաղէմի, որով խնդրէք Հայրապետական յատուկ կոնդակաւ տալ Ձեզ իրաւունս յայտարարելոյ յանուն Մեր՝ միաբանիցն

Ս. Յակոբեանց Վանաց, զի եթէ ոմանք ի նոցանէ այլ ևս հակառակ կայցեն տնօրէնութեանց Ազգային Ընդհանուր Ժողովոյ, չկատարելով զնոր կանոնագիրն, այնպիսիքն անկցին ընդ պատասխանատուութեամբ և պատժով։

Զմտանելով ի քննութիւն ըստ էութեան հիմնական տրամադրութեանց և յօդուածոց գործող կանոնադրութեան 1888 ամի և նորոյ կանոնագրի 1913 ամի, այլ առաջի աչաց ունելով զանցեալ և զներկայ իրադարձութիւնս և զամենայն հանգամանս Ս. Յակոբեանց վանուցն, զերկպառակութիւնս և զիրարամարտ վիճակ միաբանութեան Հայոց Երուսաղէմի, նաև առանձնապէս ի նկատ առեալ մեր, զի Պատրիարքն Հայոց Երուսաղէմի է զահակալ ցկեանս Առաքելական Աթոռոյն և Պետ միաբանութեան, Մեք ոչ համարիմք նպատակայարմար և օգտակար վասն խաղաղացման միաբանութեան և բարեկարգութեան վարչական–ելմտական գործոց վանուցն, նախքան զընտրութիւն Պատրիարքի զհիմնական փոփոխութիւնս մուծանել ի գործող կանոնադրութիւն վանուցն, մանաւանդ զի Պատրիարքն Հայոց Երուսաղէմի պարտ է ընթանալ ըստ ամենայնի համաձայն կանոնադրութեան և հսկել ի վերայ ուղիղ գործադրութեան նորա (յօդ. 17-րդ Ազգային սահմանադրութեան). ուստի և Մեք բարւոք վարկանեմք նախ՝ տալ կատարել զընտրութիւն Պատրիարքի, զորմէ առաջադրեալ եմք կոնդակաւ Մերով ի 5-ն դեկտեմբերի 1912 ամի ընդ համարաւ 1617, յանուն նախորդ Պատրիարքին Տ. Յովհաննէս Սրբազան Արքեպիսկոպոսի, ապա թէ իրաւախոհ լեալ ընդ Պատրիարքին Երուսաղէմի, ըստ մտաց 85-րդ յօդուածոյ կանոնաց Միաբանական Ուխտին Սրբոց Յակոբեանց, առնել զանհրաժեշտ բարեփոխութիւնս ի կանոնադրութեան վասն բարեկարգելոյ զվարչական և զտնտեսական–կալուածական գործս վանօրէից և միաբանութեան Հայոց Երուսաղէմի։

Իսկ վասն ղեկավարելոյ զպատրիարքական ընտրութիւն և առժամապէս կանոնաւորելոյ զգործս միաբանութեան ցհաստատութիւն նորոյ Պատրիարքի և վասն քննելոյ զելմտական հաշիւս, զվիճակ կալուածոց և ստացուածոց

վանօրէից Հայոց Երուսաղէմի, որպէս և զապօրինի վարմունս և զանկանոն գործս ոմանց միաբանից, անհրաժեշտ վարկանեմք, ըստ հայեցողութեան և ընտրութեան Ամենապատուութեանդ և Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, առանց յապաղման առաքել լիազօր Ցանձնախումբ մի, կազմեալ ի ձեռնհաս և ի հեղինակաւոր անձանց, յորոց մինն լիցի արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս։

Զայս ամենայն առաջարկելով Ամենապատուութեանդ վասն խաղաղացուցանելոյ և կանոնաւորելոյ զմիաբանական կեանս և զգործս Ս. Յակոբեանց վանուցն Երուսաղէմի, որ է գլխաւոր նպատակ Մեր և Ձեր ամենեցուն, յամենայն դէպս թողումք զվախճանական ընտրութիւն միջոցաց, խոնարհանութեան և հեռատես տնօրէնութեան Ամենապատուութեանդ և Ազգային Երեսփոխանական Ժողովոյ։

Օրհնեմք զՁեզ և զամենայն անդամս Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, մաղթելով ի Տեառնէ պարգևել Ձեզ կար և զօրութիւն յօգուտ և ի շինութիւն ազգային հաստատութեանց և գործոց Մերոց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 14 փետրուարի 1914 ամի
Թ. 242
ի ս. Էջմիածին։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան Ուրմիայի Հայոց փոխանորդ Տ. Թորէն վարդապետ Լազարեանի և Պ. Պ. Յ. Շահգեալդեանի, Թ. Աւագեանի, Դ. Մանասերեանի, Ա. Միրզաջանեանի, Յ. Աթանդիլեանի, Հ. Հասրաթեանի, Մ. Յակոբեանի և Աթանդիլեանի անունով, որոնք տեղական Հայ Ժողովրդից հանգանակել են տեղական դպրոցի շինութեան օգտին 8000 ռուբլի։ 29 յունուարի, Թ. 179։